ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՐՀՈՒՐԴ
SPECIAL TOPIC: MYSTERY

I. Հին Կտակարանում

Արամերեն այս բառը (BDB 1112, KB 1980), *raz*, նշանակում է «թաքցնել», «ծածուկ պահել»: Այն մի քանի անգամ գործածվում է Դանիելի գրքում (տես՝ Դան. 2:18, 19, 27, 28, 29, 30, 47, 4:9): Այն դառնում է ապոկալիպտիկ գրականության կենտրոնական թեման և նշվում է Մեռյալ Ծովի Գալարներում: Աստված հայտնում է Իր ծածուկ խորհուրդը Իր մարգարեներին (տես՝ Ծնն. 18:17, Երեմ. 23:18, Դան. 9:22, Ամովս 3:7):

Մեռյալ Ծովի Գալարների հասարակության մեջ Աստծո հայտնության վրա խորհում էին (1) ՀԿ-յան մարգարեների խոսքի միջոցով (raz), սակայն նաև (2) «արդարության ուսուցչի» մեկնության (pesher) միջոցով: Հայտնության և մեկնության նմանատիպ երկծալք՝ երկտակ ձևաչափը առանձնահատուկ է ապոկալիպտիկ գրականությանը:

II. Սինոպտիկ (համանման) Ավետարաններում «խորհուրդ» բառը գործածվում է հոգևոր հասկացությունների համար՝ դուրս բերված, հավաքված Հիսուսի առակներից.

1. Մարկոս 4:11
2. Մատթեոս 13:11
3. Ղուկաս 8:10

III. Պողոսը այն գործածում է մի քանի տարբեր կերպերով՝

1. Իսրայելի մասամբ խստասիրտ դառնալիս՝ թույլ տալու, որ հեթանոսները նույնպես ներգրավվեն իրեն կյանքի մեջ: Հեթանոսների այս ներհոսքը մեխանիզմ էր հանդիսանալու հրեաների համար, որպեսզի ընդունեն Հիսուսին որպես մարգարեության միջի Քրիստոսը (տես՝ Հռոմ. 11:25-32):
2. Ավետարանը ազգերին հայտնելու համար, նրանց պատմելու, որ բոլորն էլ ներառված են Քրիստոսի մեջ և Քրիստոսի միջոցով (տես՝ Հռոմ. 16:25-27, Կող. 2:2):
3. Երկրորդ Գալատյան ժամանակ հավատացյալների նոր մարմինների համար (տես՝ 1 Կորնթ. 15:5-57, 1 Թեսաղ. 4:13-18):
4. Քրիստոսի մեջ ամեն բան ամփոփելիս (տես՝ Եփես. 1:8-11)
5. Հեթանոսներն ու հրեաները որպես ժառանգակիցներ ներկայացնելիս (տես՝ Եփես. 2:11-3:13):
6. Ամուսնական տերմիններով Քրիստոսի և Եկեղեցու միջև մտերմիկ փոխհարաբերությունը նկարագրելիս (տես՝ Եփես. 5:22-33)
7. Ուխտի ժողովրդի մեջ ներգրավված հեթանոսներին և Քրիստոսի Հոգին նրանց մեջ ներբնակվելու, այնպես որ վերարտադրի Քրիստոսի նման լինելու հասունությունը, այսինքն՝ մարդու մեջ վերականգնի Աստծո պատկերը, որն ապականվել է (տես՝ Ծնն. 1:26-27, 5:1, 6:5,11-13, 8:21, 9:6, Կող. 1:26-28):
8. Վերջին ժամանակների Հակաքրիստոսի մասին խոսելիս (տես՝ 2 Թեսաղ. 2:1-11):

IV. Ավետարանի խորհրդի վերաբերյալ 1 Տիմ. 3:16-ում կարելի է գտնել վաղ եկեղեցու օրհներգ կամ դավանաբանություն՝ կատեքիզմ:

V. Հովհաննեսի Հայտնության գրքում այս բառը գործածվում է Հովհաննեսի ապոկալիպտիկ խորհրդապատկերների նշանակության համար՝

1. Հայտն. 1:20

2. Հայտն. 10:7
3. Հայտն. 17:5,6

VI. Այս խորհուրդները ճշմարտություններ են, որոնք մարդիկ չեն կարող բացահայտել. դրանք պետք է հայտնվեն՝ բացահայտվեն Աստծո կողմից:

VII. Տե՛ս Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը: